ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասիս քաղաքային համայնքի ղեկավարի կողմից 08.01.2016-30.06.2016թթ. կատարված աշխատանքների մասին

2016թ. հունիսի 15-ին քաղաքապետարանի դահլիճում տեղի ունեցան հանրային լսումներ քաղաքապետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ, որին հրավիրվել և մասնակցել են քաղաքային համայնքի ավագանու անդամներ, քաղաքի բնակչության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և գործարարներ:

Ըստ սահմանված կարգի՝ ամեն շաբաթ կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն, որի ընթացքում օպերատիվ լսվել են նրանց հուզող հարցերը և տրվել համապատասխան հանձնարարականներ քաղաքապետարանի պատասխանատու աշխատողներին: Քաղաքապետի ընդունելությանը մասնակցել է 219 մարդ:

Համայնքի ղեկավարի անունով մշտապես ստացվում են նաև քաղաքացիների դիմումներ, որոնք վերաբերվում են հատկապես նրանց սոցիալական հարցերին, որոշ դեպքերում՝ քաղաքաշինական վիճելի խնդիրներին: Ընթացիկ տարվա հունվար ամսից մինչև հունիսի 30-ը քաղաքապետարանի հասցեով ստացվել է 520 դիմում: Դրանք սահմանված կարգով հասցեագրվել են համապատասխան պատասխանատու աշխատողներին, դրանց տրվել է ընթացք և պատասխանվել դիմումատուներին: Բացի այդ, յուրաքանչյուր շաբաթ աշխատակազմի քարտուղարի մոտ հրավիրված խորհրդակցությունում քննարկվում են նախորդ շաբաթվա հիմնական խնդիրների արդյունքները, ինչպես նաև քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը:

Անցած 6 ամիսների ընթացքում ընդունվել է քաղաքապետի 367 որոշում, 62 կարգադրություն, աշխատակազմի քարտուղարի 23 հրաման: հունվար-հունիս ամիսներին հրավիրվել է համայնքի ավագանու 5 նիստ՝ ընդունվել է 42 որոշում:

Քաղաքապետարանի աշխատակազմի և ստորաբաժանումների կողմից 2016թ. հունվար-հունիս ամիսներին իրականացվել են հետևյալ աշխատանքները:

Գյուղատնտեսության բնագավառում

1. Աջակցել և կազմակերպվել է գյուղացիական տնտեսություններին հանքային պարարտանյութերի և դիզ. վառելիքի ձեռքբերման ու բախշման աշխատանքները:
2. Կազմվել է ընթացիկ տարվա համայնքի հողային ֆոնդի հաշվեկշիռը:
3. Գյուղատնտեսական կուլտուրաների բերքահավաքի վերաբերյալ կազմվել և վիճակագրական բաժին են ներկայացվել ամենամսյա ամփոփ հաշվետվությունները:
4. Պարբերաբար զբաղվել ենք ազգաբնակչության, վերադաս և այլ կազմակերպություններից ստացված դիմումների և գրությունների ուսումնասիրություններով ու պատասխաններով:

Ներքին աուդիտի բաժնի բնագավառում

08.01.2016թ.-30.06.2016թ. Մասիսի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժինը իր տարեկան ծրագրով նախատեսել էր ֆինանսական աուդիտ՝ թվով 8, համապատասխանության աուդիտ՝ թվով 1: Նշված ժամանակահատվածում իրականացվել են թվով 4 ֆինանսական աուդիտ՝ համապատասխան ներքին աուդիտի տարեկան ծրագրի:

2016 թվականի առաջին կիսամյակում Մասիսի քաղաքապետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից կազմվել և համայնքի ղեկավարին, կոմիտեին, այնուհետև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազոր մարմին է ներկայացվել իրականացված ֆինանսական աուդիտների արդյունքների վերաբերյալ վերջնական հաշվետվությունները, ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն են ներկայացվել նշված հաշվետվությունները, որի արդյունքում կազմվել են արձանագրություններ թերությունների շտկման վերաբերյալ, կատարվել են առաջարկություններ, ինչպես նաև լիազոր մարմին է ներկայացվել ներքին աուդիտի որակի շարունակական պարբերական գնահատումների ստուգաթերթերը: Լիազոր մարմնի կողմից տրված հանձնարարությունները կատարվել են ժամանակին: Նշված ժամանակահատվածում բաժինը քաղաքապետի հանձնարարականներով իրականացրել է աշխատանքներ:

Եկամուտների բնագավառում

Հարկային եկամուտների գանձումները առ 30.06.2016թ. կազմել են 35473.8 հզ դրամ (76.4%), որից հողի հարկը կազմում է 7421.1հզ դրամ (59.8%), այդ թվում՝ գյուղ. նշ. հողի հարկը՝ 1212.0 հզ դրամ (58.8%), ոչ գյուղ. նշ. հողի հարկը՝ 6209.1հզ դրամ (60%):

Իսկ գույքահարկը՝ 28052.7 հզ դրամ (82.6%), որից իրավաբանական անձանցից՝ 4651.5 հզ. դրամ (68.2%), ֆիզիկական անձանցից (շենք շինություններ)՝ 4032.0 հզ. դրամ (56.2%), գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 19369.2 հզ դրամ (97%):

Հողի գանձված վարձավճարները կազմում են 3570.2 հզ դրամ (64.4%), որից ոչ գյուղ. նշ. հողի վարձը կազմում է՝ 1063.7 հզ դրամ (44.2%), իսկ գյուղ. նշ. հողի վարձը՝ 156.9հզ դրամ (36%):

Տարածքի վարձակալական վճարը կազմում է՝ 2349.6 հզ դրամ (87.2%) :

Ամփոփ տվյալները ներկայացվում են կից ցուցակով:

Մասիսի քաղաքային համայնքի 2016թ-ի 30.06 դրությամբ հարկային եկամուտների մուտքերի կատարման ամփոփ տվյալները				
	Անվանում	2016թ առաջ.	2016թ տաստ. առ 30.06	2016 կատ (%)
	Գույքի և հողի հարկեր	***92770.1***	***35473.8***	***38.2***
	գույքահարկ, այդ թվում՝	**67920.1**	**28052.7**	***41.3***
	Ֆիզիկական անձանցից	14349.6	4032.0	***28.1***
	իրավ. անձանցից	13650.5	4651.5	***34.1***
	Գույքահարկ փոխադրամիջոցներից	39920.0	19369.2	***48.5***
	հողի հար, այդ թվում	**24850.0**	**7421.1**	***29.9***
	գյուղ. նշանակ. հողեր	4120.0	1212.0	***29.4***
	ոչ գյուղ. նշանակ. հողեր	20730.0	6209.1	***30.0***
	Վարձակալական վճարներ	***11073***	***3570.2***	***32.2***
	շենքի վարձակալություն	**5387.6**	**2349.6**	***43.6***
	վարձով տրվող հողեր	**5685**	**1220.6**	***21.5***
	գյուղ. նշանակ.	873.0	156.9	***18.0***
	ոչ գյուղ. նշանակ	4812.0	1063.7	***22.1***

Սոցիալական ոլորտում

1. Թվով 60 քաղաքացիների տնայցերի արդյունքում տրվել են համապատասխան տեղեկանքներ անձնագրային բաժին և ՍԾՏԳ ներկայացնելու համար:
2. Թվով 15 անապահով ընտանիքների հուղարկավորության կարիքները հոգալու համար տրամադրվել է 500.000 դրամ:
3. Թվով 60 անապահով ընտանիքներին դրամական օգնություն է տրամադրվել՝ 3000.000 դրամ:
4. Պարբերաբար այցելվել և հսկվել է բարեգործական ճաշարանի աշխատանքը:

Կրթության և սպորտի բնագավառում

2016թ. 1-ին կիսամյակում աշխատանքներ են իրականացվել համայնքային ենթակայության ուսումնական հաստատություններում երեխաների կրթության և դաստիարակության կազմակերպման ուղղությամբ, մշտական ուշադրության կենտրոնում է գտնվել սննդակարգի ռեժիմի պահպանման, սանիտարահիգիենիկ բավարար վիճակի ապահովման հարցերը:

Ապահովվել է նախադրոցական հաստատությունների տնօրենների, դաստիարակների մասնակցությունը որակավորման դասընթացներին:

Կազմակերպվել և կոորդինացվել է ՄՊՍԿ, մարզադպրոց, երաժշտական գեղարվեստի դպրոց, մարզական և այլ ՀՈԱԿ-ների գործունեությունը:

Քաղաքաշինության բնագավառում

Տրվել է շինարարության 33 հատ թույլտվություն, ճարտ. հատ. առաջադրանք՝ 35 հատ, քանդման թույլտվություն՝ 3 հատ, ինքնակամ թույլտվություն՝ 7 հատ, հասցեավորում՝ 40 հատ, ավարտական ակտերի տրամադրում՝ 16 հատ, գույքային միավորներ բաժանման և կամ միացման որոշումներ՝ 21 հատ, օտարվող կամ մրցութային կարգով հատկացվող հողերի փաստաթղթերի կազմում՝ 26 միավոր, դիմումների ուսումնասիրություն՝ 75 հատ:

Կոմունալ տնտեսության բնագավառում

1. Պայմանագրային բոլոր պարտավորությունները կատարվել են բավարար, ինչը հաստատվել է ամենօրյա շրջայցերի արդյունքում:
   ա) Պատվիրվել և պատրաստվել են ընթացիկ տարվա շին. աշխատանքների համար թվով 9 նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթներ:
   բ) Իրականացվել է վերահսկողություն 2016թ-ի ընթացքում կատարված թվով 12 շին. աշխատանքների նկատմամբ, քաղաքի գիշերային լուսավորության համակարգի մշտական սպասարկման, որակով և ժամանակին վթարների վերացման աշխատանքներին:
2. Կատարվել է քաղաքացիների դիմումների պատասխանելու և ճշտումներ կատարելու վերաբերյալ այցեր ըստ դիմած հասցեների:
3. Կատարվել է ամենօրյա շրջայց քաղաքի տարածքում աղբահանության, սանմաքրման, կանաչապատ տարածքների խնամման, պահպանման և ոռոգման աշխատանքների վերահսկման նպատակով:
4. Կատարվել է աշնանային սանիտարական էտման աշխատանքներ մոտ 4հա կանաչապատ տարածքի վրա:

Առևտրի բնագավառում

Տրվել է՝

1. Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվություն - 63
2. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն - 58
3. Բացօթյա վաճառքի թույլտվություն 47մ^2 (30 օրվա համար)
4. Հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն - 5
5. Արտաքին գովազդի թույլտվություն - 115մ^2
6. Տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն - 3
7. Հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն - 3

Իրավաբանության բնագավառում

1. Քաղաքապետարանի վարչական հանձնաժողովի կազմում կատարվել է ուսումնասիրություն, կազմվել են արձանագրություններ, պատրաստվել են որոշման նախագծեր, երկու հոգի ենթարկվել է վարչական պատասխանատվության:
2. Մասիսի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը կազմել է չորս ակտ և դրանց հիման վրա եզրակացություն, հանդես եկել դատական նիստերին, երեք հոգու նկատմամբ նշանակվել է շեֆ-դաստիարակ, երկու անչափահասների վերաբերյալ լրացվել է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական կարիքների գնահատման թերթիկները, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի կազմման ձևաթղթերը:

Լիազորագրով որպես պատասխանողի ներկայացուցիչ մասնակցել եմ դատական նիստերին:

Դատարանների վճիռներով՝ երեք դատական գործերով հայցվորների ներկայացրած պահանջները մերժվել են:
3. Դատարանների պահանջներով ճշտվել են մարդկանց փաստացի գտնվելու վայրերը, հանձնվել են դատական ծանուցագրերը:
4. Կնքվել են պայմանագրեր:
5. Պատրաստվել են համայնքի ղեկավարի կարգադրությունների, որոշումների, համայնքի ավագանու որոշումների նախագծեր:
6. Ժառանգություն ստանալու համար բնակիչներին տրամադրվել են թվով 50 տեղեկանքներ:
7. Իրավունքի պետական գրանցում ստանալու, ինչպես նաև միասնական տեղեկանք ստանալու համար դիմել ենք ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Մասիսի սպասարկման գրասենյակ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ